[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
11	Հոկտեմբեր	2019 թ.		Բ	7169897343
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
11	Հոկտեմբեր	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	4	3	8	4	6		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ՊՈԼԻԳԼՈՏՆԵՐ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	N 1150003694504546								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿԻԼԻՑԱՆ Փ. 11 83 տ.									
[13] Լրացուցիչ տվյալներ	Ծառայությունների մատուցման վայրը (հասցեն) ՀՀ ք. Երևան, Կիլյան փ. 11 83տ.									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 83166418 քրեական գործի թարգմանություն, ռուսերեն-հայերեն	էջ	1011	2300		2325300
2	Թիվ 58153819 քրեական գործի թարգմանություն, ֆրանսերեն-հայերեն	էջ	11	4200		46200
3	Թիվ 18110889 քրեական գործի թարգմանություն, ուզբեկերեն-հայերեն	էջ	3	13220		39660
4	Թիվ 69100818 քրեական գործի թարգմանություն, չեռնոգորերեն-հայերեն	էջ	1	24000		24000
5	Թիվ 58217015 քրեական գործի թարգմանություն, հունգարերեն-հայերեն	էջ	16	24000		384000
Ընդամենը						2819160

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ OHANYAN INNA 5401570325

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

11/10/2019 13:14:14

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

07-ը հունիսի, 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ.Հովհաննիսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 83166418 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվում է թիվ 83166418 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 184-րդ հոդվածի 3-րդ մասով, 214-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված առերևույթ հանցագործությունների դեպքերի վերաբերյալ:

Նախաքննության ընթացքում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության ներքին աուդիտի և վերհսկման ծառայությունից առգրավվել են ռուսերեն լեզվով կազմված, հիշյալ ծառայության կողմից ընկերությունում կատարված ստուգումների վերաբերյալ մեծածավալ հաշվետվություններ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր, որոնք ենթակա են թարգմանության հայերեն լեզվով:

Նկատի ունենալով վերը նշված փաստաթղթերի մեծածավալ լինելու հանգամանքը և այն, որ Լիլիթ Սուրկի Խաչատրյանը, Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը, Ռաիսա Աբգարի Հովհաննիսյանը, Սյուզաննա Ֆրունզիկի Խալաթյանը, Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը, Արմինե Վարուժանի Ալեքսանյանը և Անի Սերյոժայի Հովհաննիսյանը հանդիսանում են ռուսերեն լեզվով թարգմանություններ կատարող թարգմանիչներ և չեն հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ և 193-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Վարույթումս քննվող թիվ 83166418 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Լիլիթ Սուրկի Խաչատրյանին /ծնված՝ 03.07.1986թ., անձնագիր՝ AN0305005/, Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին /ծնված՝ 17.03.1980թ., անձնագիր՝ AR0516452/, Ռաիսա Աբգարի Հովհաննիսյանին /ծնված՝ 27.10.1987թ., նույնականացման քարտ՝ 004193702/, Սյուզաննա Ֆրունզիկի Խալաթյանին /ծնված՝ 20.01.1988թ., անձնագիր՝ AN0318564/, Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին /ծնված՝ 23.03.1987թ., անձնագիր՝ AM0552160/,

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

«12» հունիսի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ս.Գրիգորյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58153819 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2019 թվականի մարտի 12-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Վահե Վարուժանի Բաղդասարյանը հաղորդում է տվել, որ ս.թ. մարտի 12-ին «Իստեյտ մենեջմենթ ընդ ադմինիսթրեյշն քամփընի» ՓԲ ընկերության համակարգչային համակարգերից մեկը վնասաբեր ծրագրերի օգտագործմամբ ենթարկվել է հարձակման, ինչի արդյունքում գաղտնագրման եղանակով խափանվել է հիշյալ ընկերության համակարգչային համակարգում առկա ողջ տեղեկատվությունը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Վահե Բաղդասարյանը տված բացատրությամբ պնդել է վերոգրյալը, իսկ ընկերության տեխնիկական աշխատակից Դավիթ Սամսոնի Շահնազարյանը իր բացատրությամբ հավելել է, որ իրեն չի հաջողվել վերականգնել սերվերային համակարգում այդ պահին գործող օպերացիոն համակարգի և ծրագրային ապահովման աշխատանքը: Դավիթ Շահնազարյանը նշել է նաև, որ վնասաբեր ծրագրի գործողության արդյունքում խափանումից հետո, սերվերի էկրանին հայտնվել է էլեկտրոնային փոստի 2 հասցեներ, որոնց միջոցով ինքը կապ է հաստատել օգտատիրոջ հետ, ով համակարգչային համակարգը ապագաղտնագրելու համար պահանջել է 700 ԱՄՆ դոլարին համարժեք բիթքոին տեսակի կրիպտոարժույթ:

Դեպքի առթիվ 2019 թվականի մարտի 15-ին Վահե Բաղդասարյանի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ:

2019 թվականի մարտի 25-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել է վարույթ:

Քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմիններին, որտեղից ստացված նյութերը պարունակում են փաստաթղթեր Ֆրանսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցումների կատարմամբ ստացված Ֆրանսերեն նյութերը թարգմանել հայերեն լեզվով, իսկ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Աննա Միքայելյանն ազատ տիրապետում է հայերեն և Ֆրանսերեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 58153819 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Աննա Միքայելյանին:

2. Հրավիրվող թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, ինչպես նաև նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝ Ս.Գրիգորյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝ Ա.Միքայելյան

« » _____ 201 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

« 12 » հուլիսի 2019թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Շ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով վարույթիս թիվ 18110889 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1989 թվականի ապրիլի 8-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, գործուղման մեջ գտնվող Ուզբեկստանի Հանրապետության քաղաքացի՝ Իլգիզ Այրատի Տուխտարովը Գյումրի քաղաքի «Վան» ռեստորանում վեճի և ծեծկռտուկի ընթացքում դանակահարել է Գյումրի քաղաքի բնակիչ Արիստակես Միշայի Քոչարյանին՝ վերջինիս պատճառելով մարմնական վնասվածք:

Դեպքի առթիվ 1989 թվականի ապրիլի 9-ին ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18110889 քրեական գործը, կատարվել նախաքննություն:

1989 թվականի հունիսի 9-ին քրեական գործով որոշում է կայացվել մեղադրյալ Իլգիզ Այրատի Տուխտարովի նկատմամբ հետախուզում հայտարարելու և նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով գործով վարույթը կասեցնելու մասին:

2004 թվականի օգոստոսի 27-ին քրեական գործով որոշում է կայացվել Իլգիզ Այրատի Տուխտարովի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելու մասին:

2006 թվականի փետրվարի 16-ին որոշումներ են կայացվել Իլգիզ Այրատի Տուխտարովին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 14.01.1968թ. ծնված Իլգիզ Այրատի Տուխտարովը բնակվել է Ուզբեկստանի Հանրապետության Ախանգարանի շրջանի 50-ամյակ ԼԿԵՄ սովխոզում:

Մեղադրյալ Իլգիզ Այրատի Տուխտարովի վերաբերյալ Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ՔՀԳՎ-ից ստացված նյութերի համաձայն՝ վերջինս 24.10.1997 թվականին Ուզբեկստանի Հանրապետության ներքին գործերի Ախանգարանի վարչությունից ստացել է CB 0743507 սերիա-համարի անձնագիր, որում որպես հաշվառման վայր նշվել է Դուստլիկ բնակավայրը: Մահվան վերաբերյալ բժշկական վկայականի համաձայն՝ Իլգիզ Այրատի Տուխտարովը 2001 թվականի մարտի 20-ին մահացել է, ինչի մասին բացատրությամբ վկայել է նաև վերջինիս մայրը՝ Ուզբեկստանի Հանրապետության Ախանգարա քաղաքի Տաշքենդի շրջանի 2-րդ միկրոռայոնի 15 շենքի 69 բնակարանի բնակչուհի Տամիռբեկ Խակիմովը:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով Ուզբեկստանի Հանրապետության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված նյութերի համաձայն՝ Ուզբեկստանի Հանրապետության Ախանգարանսկի շրջանի ՔԿԱԳ բաժնի կողմից կատարվել է մահվան մասին թիվ 102 ակտի գրանցումը, համաձայն որի՝ 14.01.1968 թվականին ծնված Իլգիզ Այրատի Տուխտարովը 2001 թվականի մարտի 20-ին Ուզբեկստանի Հանրապետության Տաշքենդի մարզի Ալմալիկ քաղաքում մահացել է

2018 թվականի նոյեմբերի 5-ին թիվ 18110889 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցում է ուղարկվել Ուզբեկստանի Հանրապետության իրավասու մարմիններին:

2019 թվականի փետրվարի 7-ին Ուզբեկստանի հանրապետության իրավասու մարմիններից ստացվել է ուղղարկված հարցման պատասխանը կից փաստաթղթերով, որոնք ուղղարկվել է ՀՀ քննչական կոմիտե հայերեն լեզվով թարգմանելու համար:

2019 թվականի հուլիսի 12-ին ՀՀ քննչական կոմիտեից ստացված թիվ 27/178704-19 գրության համաձայն՝ թիվ 18110889 քրեական գործով ուղղարկված փաստաթղթերի թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ է թարգմանիչ ներգրավելու մասին որոշում: Ուզբեկերեն լեզվի թարգմանությունն կատարելու է «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանը:

2019 թվականի հուլիսի 12-ին որոշում է կայացվել թիվ 18110889 քրեական գործով վարույթը վերսկսելու մասին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է կատարել ուզբեկերեն լեզվով փաստաթղթերի թարգմանություններ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 18110889 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանին:

2. Սիրանուշ Լևոնի Սարգսյանյանին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ **Ե.Վ.Իկիլիկյան**

Ծանոթացա որոշմանը՝

«22» հուլիսի 2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

ք. Երևան 31 հուլիսի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ՀԿԳ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Դ.Ս.Թադևոսյանս, ուսումնասիրելով վարույթում քննվող թիվ 69100818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Մոնտենեգրոյի իրավասու մարմնից ստացվել է Հերիքնազ Վաքիլի Սալոյանի վերաբերյալ հարուցված թիվ Kt. 90-16 քրեական վարույթը, որի համաձայն՝ 2015 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, Մոնտենեգրոյի Կոտոր քաղաքի Նյեգոսևա 156 հասցեում գտնվող երկհարկանի տան 2-րդ հարկում Հերիքնազ Վաքիլի Սալոյանը (ծնված՝ 07.08.1996թ., ՀՀ քաղաքացու՝ AN սերիայի 0621101 անձնագիր), միացնելով մետաղական աթոռին դրված էլեկտրական տաքացուցիչը, մտել է բաղնիք՝ լոգանք ընդունելու, որի ընթացքում էլեկտրական տաքացուցիչը բոցավառվել է և բռնկվել է կրակ, որի ընթացքում վնասվել և ոչնչացվել է նշված տան սեփականատեր Միլենա Ջոյիսին (Milena Jojić) պատկանող տարբեր տեսակի գույք, ինչպես նաև վնասվել է տան հարդարանքը:

Դեպքի առթիվ Մոնտենեգրոյի Կոտոր քաղաքի դատախազությունում Մոնտենեգրոյի քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի 2-րդ մաս) հարուցվել է թիվ Kt. 90-16 քրեական գործը:

2018թ. փետրվարի 20-ին քրեական գործն ընդունվել է Բաժնի վարույթ, քրեական գործին շնորհվել է թիվ 69100818 հերթական համարը:

Նախաքննության ընթացքում կազմվել են իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումներ՝ ուղղված Չեռնոգորիայի (Մոնտենեգրո) իրավասու մարմնին, որոնք ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ այն կատարման նպատակով համապատասխան իրավասու մարմնին փոխանցելու համար:

2019թ. հունիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացվել են Ռումինիայում Չեռնոգորիայի դեսպանությունից ուղարկված օտարալեզու փաստաթղթեր, որոնք ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ ՔԿ) դեպարտամենտ՝ դրանց հաստատված հայերեն թարգմանությունն ապահովելու համար:

2019թ. հուլիսի 12-ին և 29-ին ՀՀ ՔԿ դեպարտամենտից ստացվել են գրություններ այն մասին, որ հիշյալ թարգմանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է թարգմանիչ ներգրավելու մասին որոշում, իսկ թարգմանությունը կատարելու են <<Պոլիգլոտներ>> ՍՊԸ-ի թարգմանիչներ **Սիրանուշ Լևոնի Սարգսյանը** (ծնված՝ 20.08.1983թ., Ռուսաստանի Դաշնության քաղաքացու՝ 60 06 799493 համարի անձնագիր) և **Ռաիսա Աբգարի Հովհաննիսյանը** (ծնված՝ 27.10.1987թ., ՀՀ քաղաքացու՝ 004193702 համարի նույնականացման քարտ):

25.02.2019թ. որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

31.07.2019թ. քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Նկատի ունենալով, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է, այսինքն՝ հիշյալ փաստաթղթերը հայերեն

թարգմանելու համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Պոլիգլոտներ>> ՍՊԸ-ի թարգմանիչներ **Սիրանուշ Լևոնի Սարգսյանին** (ծնված՝ 20.08.1983թ., Ռուսաստանի Դաշնության քաղաքացու՝ 60 06 799493 համարի անձնագիր) և **Ռաիսա Աբգարի Հովհաննիսյանին** (ծնված՝ 27.10.1987թ., ՀՀ քաղաքացու՝ 004193702 համարի նույնականացման քարտ):

2. Ս.Սարգսյանին և Ռ.Հովհաննիսյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ **Դ.Թադևոսյան**

Որոշմանը ծանոթացել եմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով, և առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչներ՝

_____ Ս.Սարգսյան

_____ Ռ.Հովհաննիսյան

« »_____ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

13 հուլիսի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Շ.Ղազարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58217015 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ՝

Անհայտ անձը 2015թ. օգոստոսի 19-ից հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում չպարզված եղանակով հասանելիություն է ստացել «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲ ընկերության հաճախորդ Դանիել Հիլերի էլ. փոստին և վերջինիս անունից նամակներ ուղարկելով Բանկի ծառայողական էլ. փոստերին՝ Դանիել Հիլերի հաշվից դրամական փոխանցումներ կատարելու վերաբերյալ հանձնարարականներ է տվել Բանկին, որի արդյունքում համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակվել է հիշյալ հանձնարարականների հիման վրա Բանկի կողմից փոխանցված, առանձնապես խոշոր չափերի՝ 112.665.864 ՀՀ դրամին համարժեք 234.665 ԱՄՆ դոլար գումարը:

Դեպքի առթիվ 2015թ. նոյեմբերի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58217015 քրեական գործը, որի նախաքննությունը կատարվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Նախաքննության ընթացքում իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Հունգարիայի Հանրապետության իրավասու մարմնին, որի շրջանակներում ստացվել են հունգարերեն լեզվով փաստաթղթեր, որոնք ենթակա են թարգմանության:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանը տիրապետում է հունգարերեն լեզվին և ունի թարգմանչի որակավորում, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 58217015 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանին /ծնված՝ 20.08.1983թ., անձնագիր՝ 799493, տրված՝ 20.03.2007թ., դիպլոմ թիվ 263100122382, տրված 06.08.2018թ./, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Պետի տեղակալ՝ **Շ.Ղազարյան**

Ծանոթացա սույն որոշմանը: Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝ **Ս.Սարգսյան**